ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մրգավան համայնք, /0235/ 2-25-29, mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<09 >> նոյեմբերի 2011 թվականի N 14

ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և նկատի ունենալով, որ համայնքի 2011 թվականի բյուջեով մասնագիտական ծառայություն, նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին, տեղեկատվական ծառայություններ, էներգետիկ ծառայություններ հոդվածների համար նախատեսված գումարը բավարար չէ՝ Մրգավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Կառավարման մարմնի պահպանում (01.01.01.51) ծրագրի 4111 (աշխատավարձ) հոդվածից 320,0 /երեք հարյուր քսան հազար/ հզ դրամ հատկացնել.

1) Կառավարման մարմնի պահպանում (01.01.01.51) ծրագրի 4212 (էներգետիկ ծառայություն) հոդվածին՝ 50,0 /հիսուն հազար/ հզ դրամ:

2) Կառավարման մարմնի պահպանում (01.01.01.51) ծրագրի 4241 (մասնագիտական ծառայություն) հոդվածին՝ 75,0 /յոթանասունհինգ հազար/ հզ դրամ:

3) Թատերական ներկայացումներ (08.02.05.52) ծրագրի 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածին՝ 25,0 /քսանհինգ հազար/ հզ դրամ:

4) Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (01.03.03.51) ծրագրի 4819 (նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին) հոդվածին՝ 20,0 /քսան հազար/ հզ դրամ:

5) Կրթություն այլ դասերին չպատկանող (09.08.01.51) ծրագրի 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին՝ 150,0 /մեկ հարյուր հիսուն հազար/ հզ դրամ:

2. Կառավարման մարմնի պահպանում (01.01.01.51) ծրագրի 4214 (կապի ծառայություն) հոդվածից 40,0 /քառասուն հազար/ հզ դրամ հատկացնել կառավարման մարմնի պահպանում (01.01.01.51) ծրագրի 4234 (տեղեկատվական ծառայություններ) հոդվածին:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Գ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մ. ԹԵՎՈՍՅԱՆ

Մ. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ

Զ. ԱՎԱԳՅԱՆ

Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մրգավան համայնք, /0235/ 2-25-29, mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<09 >> նոյեմբերի 2011 թվականի N 15

ՋԵՌՈՒՑՄԱՆ ՍԵԶՈՆԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ <<ՄՐԳԱՎԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ կետով և նկատի ունենալով, որ հնարավոր չէ ձմռան ամիսներին ապահովել մանկապարտեզի ջեռուցումը՝ Մրգավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ձմեռվա ջեռուցման սեզոնի հետ կապված՝ 2011թվականի նոյեմբերի 1-ից ժամանակավորապես դադարեցնել <<Մրգավանի մանկապարտեզ>> ՀՈԱԿ գործունեությունը:
2. Աշխատավարձը վճարել օրենքով սահմանված կարգով:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Գ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Մ. ԹԵՎՈՍՅԱՆ
Մ. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
Զ. ԱՎԱԳՅԱՆ
Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մրգավան համայնք, /0235/ 2-25-29, mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<09 >> նոյեմբերի 2011 թվականի N 16

675ՔՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետը և հաշվի առնելով համայնքի զարգացման անհրաժեշտությունը՝ Մրգավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Թույլատրել համայնքի ղեկավարին օրենքով սահմանված կարգով աճուրդային եղանակով օտարել Մրգավան համայնքի վարչական տարածքում գտնվող 675քմ հասարակական կառուցապատման հողամասը:
2. Հասարակական կառուցապատման նպատակով օտարվող 675քմ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի աճուրդ-վաճառքի մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Զ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Մ. ԹԵՎՈՍՅԱՆ
Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
Զ. ԱՎԱԳՅԱՆ
Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՐԳԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Մրգավան համայնք, /0235/ 2-25-29, mrgavangp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<09 >> նոյեմբերի 2011 թվականի N 17

23.2 ՔՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ, ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 66-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թվականի <<Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման կարգը հաստատելու մասին>> թիվ 286 որոշման 21-րդ կետը՝ Մրգավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող 23.2քմ հասարակական կառուցապատման հողամասը, որպես ընդլայնում, ուղղակի վաճառքով օտարել:
2. Հողամասի ուղղակի վաճառքի գինը սահմանել հողամասի կադաստրային գնի 100%- ի չափով:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Գ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Մ. ԹԵՎՈՍՅԱՆ
Ս. ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ
Զ. ԱՎԱԳՅԱՆ
Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ